

ԻՆՎԻԱ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՍ ՓԲԸ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
INVIA INVESTMENTS CJSC AGREEMENT FOR PROVISION OF CUSTODIAN SERVICES

Հաստատված է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

04/08/2024թ. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից

Ուժի մեջ է 14/08/2024թ-ից

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	GENERAL PROVISIONS
<p>Սույն պահառության ծառայությունների մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կարգավորում է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պահառու) կողմից պահառական և այլ հարակից ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:</p>	<p>This custodial services provision agreement (hereinafter referred to as the Agreement) regulates the procedure and conditions for the provision of custodial and other related services by "Invia Investments" CJSC (hereinafter referred to as the Custodian).</p>
<p>Սույն Պայմանագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Պահառուի կանոնադրությանը և Պահառուական կանոններին(այսուհետ Կանոններ) համապատասխան:</p>	<p>This Agreement is drafted in accordance with the legislation regulating the securities market of the Republic of Armenia, the normative legal acts adopted by the Central Bank of the Republic of Armenia, the Charter and the Rules(hereinafter Rules) of the Custodian.</p>
<p>Սույն Պայմանագիր համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 444-րդ հոդվածի հանդիսանում է՝ միացման պայմանագիր: Սույն Պայմանագիրը հրապարակային օֆերտա չէ և դրա վրա չեն տարածվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հրապարակային օֆերտայի վերաբերյալ դրույթները:</p>	<p>According to Article 444 of the RA Civil Code, this Agreement is a connection agreement.This Agreement is not a public offer and the provisions of the RA Civil Code regarding public offers do not apply to it.</p>
<p>Սույն պահառության Պայմանագրին միանալն իրականացվում է շահագրգիռ Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից INVIA հարթակի միջոցով Բրոքերային/արժեթղթերի հաշվի բացման հայտ-պայմանագրի հաստատման միջոցով համաձայն Ընկերության բրոքերային (դիլերային) գործունեության կանոնների Հավելված 11-ի (ֆիզիկական անձանց համար) և Հավելված 12-ի (իրավաբանական անձանց համար):</p>	<p>Joining this Custody Agreement is carried out by interested individuals and legal entities through the INVIA platform by confirming the application-contract for opening a brokerage/securities account, in accordance with Appendix 11 (for individuals) and Appendix 12 (for legal entities) of the Company's brokerage (dealer) activity rules.</p>
<p>Պահառուն իրավունք ունի մերժել սույն պահառության պայմանագրին միանալու մեջ շահագրգռված անձին պահառության պայմանագրի կնքումը (միացման մասին նրա հայտի գրանցումը) առանց որևէ բացատրություն ներկայացնելու:</p>	<p>The Custodian has the right to refuse the signing of the Agreement (registration of his application for joining) to the person interested in joining this custody agreement without giving any explanation.</p>
<p>Սույն Պայմանագրի պայմանները հրապարակային են և հասանելի են շահագրգիռ անձանց Ընկերության կայքում:</p>	<p>The terms of this Agreement are public and available to interested parties on the Company's website.</p>
<p>Սույն Պայմանագրի անբաժանելի մաս է կազմում Պահառուի Պահառության գործունեությունը կարգավորող կանոնները:</p>	<p>The rules governing custody activities of the Custodian are an integral part of this Agreement.</p>
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ	SUBJECT OF THE AGREEMENT
<p>Սույն Պայմանագրով Պահառուն մատուցում է արժեթղթերի շուկայում հետևյալ պահառության ծառայությունները.</p>	<p>Under this Agreement the Custodian provides the following custodian services in the securities market:</p>
<ul style="list-style-type: none"> • իր մոտ Հաճախորդի համար բացել և վարել Արժեթղթերի հաշիվ՝ գրանցելով այդ հաշվի հետ կապված յուրաքանչյուր գործարքի ժամկետն ու էական պայմանները, 	<ul style="list-style-type: none"> • open and keep a depo account for the Client, registering the terms and the essential conditions of each transaction on such account,

<ul style="list-style-type: none"> գրանցել/հաշվառել Հաճախորդի արժեթղթերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները, 	<ul style="list-style-type: none"> register/account for ownership and other property rights to the Client's securities,
<ul style="list-style-type: none"> ոչեստրավարների և այլ պահառուների մոտ հանդես գալ որպես Հաճախորդի արժեթղթերի անվանատեր, 	<ul style="list-style-type: none"> act as a nominee holder of the Client's securities when dealing with registry keepers and other custodians,
<ul style="list-style-type: none"> արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով տեղեկություններ և փաստաթղթեր փոխանցել թողարկողից, ոչեստրավարից կամ այլ պահառուից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդից թողարկողին, ոչեստրավարին կամ այլ պահառուին, 	<ul style="list-style-type: none"> ensure the implementation of right arisen from the securities, transfer to the Client information and documents from the issuer, the registry keeper or other custodians, as well as from the Client to the issuer, the registry keeper or other custodians,
<ul style="list-style-type: none"> կազմակերպել Հաճախորդի դեպո հաշվին հաշվեգրված արժեթղթերի հետ կապված թողարկողների կորպորատիվ գործողությունների արտացոլումը, 	<ul style="list-style-type: none"> ensure that the issuer's corporate actions are reflected on the securities kept on the Client's depo account,
<ul style="list-style-type: none"> գրանցել Հաճախորդի արժեթղթերի հաշվին հաշվեգրված արժեթղթերի գրավով կամ այլ ծանրաբեռնվածությունը, 	<ul style="list-style-type: none"> register pledge or other encumbrances in relation to the securities kept on the Client's depo account,
<ul style="list-style-type: none"> Հաճախորդին տրամադրել դեպո հաշվից քաղվածքներ եւ գործառնությունների մասին տեղեկանքներ (հաշվետվություններ): 	<ul style="list-style-type: none"> provide the Client with account statements and statements (reports) on transactions.
<p>Պայմանագրով Հաճախորդի համար բացվում է.</p> <ul style="list-style-type: none"> սեփականատիրոջ դեպո հաշիվ, 	<p>Under this Agreement the following account is opened for the Client:</p> <ul style="list-style-type: none"> owner's depo account,
<p align="center">ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՌՈՒՆ ՀԱՆՃՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ</p>	<p align="center">PROCEDURE FOR SUBMISSION OF THE CLIENT'S ORDERS TO THE CUSTODIAN</p>
<p>Պահառուն պահառության գործառնություններ է կատարում Հաճախորդի, նրա լիազորված ներկայացուցչի (այդ թվում՝ բրոքերային ընկերության կամ հավատարմագրային կառավարչի) հանձնարարականների (այդ թվում՝ էլեկտրոնային հանձնարարականների) հիման վրա:</p>	<p>The Custodian executes custody operations based on the orders (including electronic orders) delivered by the Client, his/her authorized representative (including a brokerage company or an asset manager).</p>
<p>Հաճախորդի արժեթղթերի գրավադրման դեպքում արժեթղթերով գործառնություններ կատարվում են միայն գրավառուի և Հաճախորդի կողմից համատեղ ստորագրված հանձնարարականների հիման վրա, բացառությամբ Հաճախորդի կողմից գրավառուի նկատմամբ իր պարտականությունները չկատարելու դեպքի: Այդ դեպքում, գրավով ծանրաբեռնված արժեթղթերով գործառնությունները կատարվում են գրավի մասին պայմանագրի պահանջներին համապատասխան:</p>	<p>If the Client's securities are pledged, any transaction with these securities can be executed only based on an order signed by both the pledgee and the Client, except if the Client fails to fulfill its obligations to the pledgee. In this case the transactions with the securities shall be executed according to the provisions of the pledge agreement</p>
<p>Պահառության գործառնությունների իրականացման հանձնարարականները Պահառուին կարող են ներկայացվել առձեռն, փոստով, էլեկտրոնային փոստով, կամ Պահառուի վեբ/մոբայլ հավելվածով:</p>	<p>Orders for custodian transactions are considered to be submitted to the Custodian by hand, by mail, by email, or through the Custodian's web/mobile application.</p>
<p align="center">ԱՐԺԵԹՂԹԵՐԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ</p>	<p align="center">PROCEDURE FOR PROVISION OF CUSTODIAN SERVICES TO IMPLEMENT RIGHTS ARISEN OUT OF SECURITIES</p>
<p>Արժեթղթերի նկատմամբ Հաճախորդի իրավունքները հավաստվում են Պահառուի կողմից արժեթղթերի վերաբերյալ կատարված գրառումներով: Պահառության հանձնված արժեթղթերի սեփականության իրավունքը համարվում է</p>	<p>The Client's rights for securities are verified by the records kept by the Custodian. The ownership right for securities held in custody is considered to be transferred</p>

<p>փոխանցված՝ Հաճախորդի դեպո հաշվում համապատասխան գրառում կատարելու պահից:</p>	<p>once a record to that effect is made to the Client's depo account.</p>
<p>Արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով Պահառուն թողարկողի, ռեեստրավարի կամ այլ պահառուի կողմից Հաճախորդին, ինչպես նաև Հաճախորդի կողմից թողարկողին, ռեեստրավարին կամ այլ պահառուին է փոխանցում տեղեկություններ և փաստաթղթեր:</p>	<p>To implement rights arisen out of securities, the Custodian transfers information and documents from the issuer, the registry keeper, or other custodian to the Client, as well as from the Client to the issuer, the registry keeper, or another custodian.</p>
<p>Պահառուն իրավունք չունի օգտագործել Հաճախորդի արժեթղթերը սեփական պարտավորությունները մարելու համար, ինչպես նաև օգտագործել վերջիններս որպես իր սեփական, իր՝ այլ Հաճախորդների կամ երրորդ անձանց նկատմամբ ունեցած պարտավորությունների ապահովման միջոց:</p>	<p>The Custodian has no right to use the Client's securities to repay its own obligations, or use them as its own to secure its obligations to other Clients or third parties.</p>
<p>Պահառուն ապահովում է իրեն և Հաճախորդին պատկանող արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված հաշվառումը՝ սեփական արժեթղթերի հաշիվ և անվանատիրոջ հաշիվ (Հաճախորդին պատկանող արժեթղթերի համար) բացելով ռեեստրում կամ այլ պահառուի մոտ:</p>	<p>The Custodian shall keep separate records of securities rights of its own and those of the Client's, by opening an owner's securities account and a nominee holder's account (for the Client's securities) with a registry keeper or another custodian.</p>
<p>Պահառուն ապահովում է նաև Հաճախորդին պատկանող արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված հաշվառումը (փաստաթղթային արժեթղթերի դեպքում՝ նաև առանձնացված պահպանումը) իր այլ հաճախորդներին պատկանող արժեթղթերի նկատմամբ իրավունքներից:</p>	<p>The Custodian shall also ensure that the records of securities rights of the Client (and if the securities are in physical form, also such securities) are kept separately from the securities rights of its other Clients.</p>
<p>Առանձին հաշվառման են ենթակա նաև՝</p>	<p>The following shall also be subject to separate keeping:</p>
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերն այն արժեթղթերից, որոնք նա օգտագործում, տիրապետում կամ տնօրինում է օրենքով սահմանված իրավասության կամ արժեթղթերի սեփականատիրոջ հետ կնքված հանձնարարության, գործակալության, կոմիսիայի, հավատարմագրային կառավարման պայմանագրի հիման վրա, 	<ul style="list-style-type: none"> • securities owned by the Client from securities used, managed, or controlled by the Client based on an agency, commission, asset management agreement concluded with the owner of securities,
<ul style="list-style-type: none"> • իրավունքների սահմանափակումներով արժեթղթերը, 	<ul style="list-style-type: none"> • securities with limited rights,
<ul style="list-style-type: none"> • արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքից բացի, այլ գույքային իրավունքները: 	<ul style="list-style-type: none"> • property rights other than securities ownership rights.
<p>Արժեթղթերից բխող իրավունքների իրականացման նպատակով Հաճախորդի կողմից տրված հանձնարարության և (կամ) լիազորագրի հիման վրա Պահառուն կարող է Հաճախորդին մատուցել նաև հետևյալ լրացուցիչ ծառայությունները՝</p>	<p>In order to implement rights arisen out of securities the Custodian can provide the Client with the following additional services based on an order and/or power of attorney issued by the latter:</p>
<ul style="list-style-type: none"> • բաժնային արժեթղթերի սեփականատերերի ժողովներում Հաճախորդի շահերի ներկայացում, 	<ul style="list-style-type: none"> • represent the Client's interests at shareholders meetings,
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդին արժեթղթերի շուկայի, թողարկողի գործունեության և ֆինանսական վիճակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, 	<ul style="list-style-type: none"> • provide the Client with information about securities market, the issuer's activity, and the financial situation,
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդին ներդրումների, արժեթղթերի (այդ թվում՝ օտարերկրյա) նկատմամբ իրավունքների գրանցման համակարգերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, 	<ul style="list-style-type: none"> • provide the Client with advice on investments, registration systems of rights arisen out of securities (including foreign securities),
<ul style="list-style-type: none"> • արժեթղթերի մարումների և զեղչատուկոսների վճարումների ժամանակ համապատասխան գումարների ստացում և փոխանցում Հաճախորդին, 	<ul style="list-style-type: none"> • receive and transfer to the Client the proceeds from securities redemption and the coupon payments,
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդի արժեթղթերի առուվաճառքի կազմակերպում, 	<ul style="list-style-type: none"> • arrange buying and selling of the Client's securities,
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդին օրենքներով և այլ իրավական ակտերով չարգելված այլ ծառայությունների մատուցում: 	<ul style="list-style-type: none"> • provide the Client with other services not prohibited by laws and legal acts.

ՀԱՃԱՆՈՐԴԻՆ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ	PROVISION OF STATEMENTS, REPORTS, AND OTHER DOCUMENTS TO THE CLIENT
Հաճախորդը ցանկացած պահի կարող է հարցում ներկայացնել Պահառուին հետևյալ փաստաթղթերի և տեղեկությունների ստացման համար՝	1. The Client may at any time request to receive the following documents and information:
<ul style="list-style-type: none"> • իր դեպո հաշվից քաղվածքներ, 	<ul style="list-style-type: none"> • statements from his depo account,
<ul style="list-style-type: none"> • իր դեպո հաշվով կատարված յուրաքանչյուր գործառնության մասին տեղեկանք (հաշվետվություն), 	<ul style="list-style-type: none"> • statement (report) on any transaction over his depo account,
<ul style="list-style-type: none"> • իր դեպո հաշվով որոշակի ժամանակաշրջանում կատարված գործառնությունների մասին հաշվետվություն, 	<ul style="list-style-type: none"> • report on transactions made on his depo account for a certain period of time,
<ul style="list-style-type: none"> • իր դեպո հաշվի և դրանում հաշվառվող արժեթղթերի վերաբերյալ այլ հասանելի տեղեկություններ: 	<ul style="list-style-type: none"> • other information on his depo account and securities registered on that account.
Հաճախորդի դեպո հաշվից քաղվածքը, դեպո հաշվով կատարված գործառնության մասին տեղեկանքը և ամսվա ընթացքում դեպո հաշվով կատարված գործառնությունների մասին ամսեկան հաշվետվությունը Հաճախորդին են ներկայացվում Կանոններով սահմանված ձևերով և ժամկետներում:	Statement on Client's depo account, statement on transactions made on depo account and monthly report on made transactions shall be presented to the Client in order and timeframe stated by Rules.
ՀԱՃԱՆՈՐԴԻ ՀԵՏ ԿԱՊԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ	PROCEDURE FOR CONTACTING THE CLIENT
Հաճախորդը Պահառուի հետ կապի մեջ է մտնում ուղղակիորեն, կամ իր պատշաճ ձևով լիազորված ներկայացուցչի միջոցով Պահառուի	The Client shall communicate with the Custodian directly or via a properly appointed authorized representative.
ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES
Պահառուն պարտավոր է.	The Custodian shall:
<ul style="list-style-type: none"> • ժամանակին կատարել և պահպանել պահառության հանձնված արժեթղթերի նկատմամբ իրավունքը հավաստող գրառումները, 	<ul style="list-style-type: none"> • make timely records verifying rights on securities held in custody,
<ul style="list-style-type: none"> • ապահովել Հաճախորդին պատկանող արժեթղթերի նկատմամբ իրավունքների առանձնացված հաշվառումը (փաստաթղթային արժեթղթերի դեպքում՝ նաև առանձնացված պահպանումը), 	<ul style="list-style-type: none"> • keep separate records of the Client's securities rights (also ensure separate storage of securities that are in physical form),
<ul style="list-style-type: none"> • ապահովել Հաճախորդի դեպո հաշվի վերաբերյալ գաղտնիությունը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Պահառուի մոտ վարվող հաշիվների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձինք: 	<ul style="list-style-type: none"> • ensure the confidentiality of the Client's depo account. Information on the accounts held by the Custodian can be disclosed in cases defined by the legislation of the Republic of Armenia exclusively to entities defined by the legislation of the Republic of Armenia,
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդին և օրենքով սահմանված կարգով հարցում ներկայացրած այլ անձանց ներկայացնել Հաճախորդի դեպո հաշվում կատարված գրառումների վերաբերյալ ճշգրիտ տվյալներ, 	<ul style="list-style-type: none"> • provide accurate information regarding the records made on the Client's depo account to the Client or other persons that submitted a request to that effect according to the provisions of the legislation,
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդի դեպո հաշվում գրառումներ կատարել միայն նման գրառումներ կատարելու հիմք հանդիսացող փաստաթղթերի ներկայացման դեպքում, 	<ul style="list-style-type: none"> • make records on the Client's depo account only if relevant documents have been submitted,
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդի հանձնարարականները կատարել Կանոններով սահմանված կարգով և ժամկետներում, 	<ul style="list-style-type: none"> • carry out the Client's instructions as and when defined by the Rules,
<ul style="list-style-type: none"> • յուրաքանչյուր պահառության գործառնության կատարման ավարտին կազմել և Կանոններով նախատեսված անձանց առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով տրամադրել գրառման 	<ul style="list-style-type: none"> • after each custodian transaction, compile and deliver to persons stipulated by the Rules by hand, via mail or e-mail, a report, statement, or reference on completion or refusal of transaction,

կատարման կամ մերժման մասին հաշվետվություն, քաղվածք կամ տեղեկանք,	
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդին տեղյակ պահել Կանոնների փոփոխությունների մասին դրանք ուժի մեջ մտնելուց առնվազն 10 օր առաջ, 	<ul style="list-style-type: none"> • inform the Client about changes in the Rules at least 10 days before they become effective,
<ul style="list-style-type: none"> • պահառության գործունեության դադարեցման դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Հաճախորդին այդ մասին և անմիջապես միջոցներ ձեռնարկել Հաճախորդի արժեթղթերը այլ պահառուի կամ ռեեստրավարի մոտ բացված Հաճախորդի անձնական հաշվին փոխանցելու ուղղությամբ, 	<ul style="list-style-type: none"> • in case of termination of custodian operations, advise the Client accordingly within one business day and make immediate arrangements for the transfer of the Client's securities to an account opened in the Client's name with another custodian or registry keeper
<ul style="list-style-type: none"> • կատարել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Կանոններով և սույն պայմանագրով իր համար սահմանված այլ պարտականությունները: 	<ul style="list-style-type: none"> • comply with other obligations defined by the Law of the Republic of Armenia "On Securities Market", the Rules and this agreement.
Պահառուն իրավունք ունի.	The Custodian may:
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդի արժեթղթերով պահառության գործառնությունների կատարման ընթացքում՝ առանց հաճախորդի լրացուցիչ հանձնարարականի բացել և փակել Հաճախորդի դեպո հաշվի ենթահաշիվներ և բաժիններ, 	<ul style="list-style-type: none"> • while effecting custodian transactions on the Client's depo account, open and close sub-accounts and sections of the Client's depo account without any additional Client orders,
<ul style="list-style-type: none"> • Հաճախորդի կողմից սույն պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում արգելափակել Հաճախորդի դեպո հաշիվը, 	<ul style="list-style-type: none"> • block the Client's depo account if they fail to fulfill their obligations,
<ul style="list-style-type: none"> • մերժել Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականների կատարումը, եթե դրանք չեն ներկայացվել Կանոններով և սույն պայմանագրով սահմանված ձևերով, ներկայացվել են սխալ լրացված ձևերով, կամ Պահառուն ունի տեղեկություն այն մասին, որ տվյալ հանձնարարականի վերջնական շահառուն ՄԱԿ-ի, ԵՄ-ի, Մեծ բրիտանիայի կամ ԱՄՆ-ի կողմից սահմանված պատժամիջոցների ցակերում ներառված անձ է, 	<ul style="list-style-type: none"> • refuse to execute the Client's orders if they weren't submitted according to the provisions of the Rules and this agreement or were filled in improperly, or in case the Custodian becomes aware that the ultimate beneficiary of the order is an entity included in the sanction lists issued by the UN, European Union, Great Britain, or USA,
<ul style="list-style-type: none"> • առանց Հաճախորդի նախնական համաձայնության փոփոխություններ մտցնել Կանոնների մեջ, 	<ul style="list-style-type: none"> • amend the Rules without obtaining the Client's prior consent,
<ul style="list-style-type: none"> • օգտվել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Կանոններով և սույն պայմանագրով իր համար սահմանված այլ իրավունքներից: 	<ul style="list-style-type: none"> • exercise other rights stipulated by the Law of the Republic of Armenia "On Securities Market", the Rules, and this agreement.
Հաճախորդը պարտավոր է.	The Client shall:
<ul style="list-style-type: none"> • Պահառուի կողմից սահմանված կարգով և չափով վճարել Պահառուին նրա մատուցած ծառայությունների դիմաց, 	<ul style="list-style-type: none"> • pay the Custodian for services provided as and at the rate specified by the Custodian,
<ul style="list-style-type: none"> • իր հայտում ներառված անձնական տվյալներում (անձնագրի համար, սերիա, բնակության վայր և այլն) փոփոխություններ լինելու դեպքում այդ մասին 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Պահառուին՝ նոր քարտ ներկայացնելու միջոցով, 	<ul style="list-style-type: none"> • within 10 (ten) business days after any changes in their personal information (passport number, series, address etc.) notify the Custodian accordingly by submitting an updated application,
<ul style="list-style-type: none"> • իր դեպո հաշվում իր նախաձեռնությամբ գործառնություններ կատարելու նպատակով հանձնարարականները ներկայացնել Կանոններով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևերով և պատշաճ կարգով լրացված, 	<ul style="list-style-type: none"> • submit orders for execution of transactions on his depo account filled in properly and in the form defined by the Rules and other legal acts,
<ul style="list-style-type: none"> • փաստացի արժեքով փոխհատուցել իրեն պահառության ծառայություններ մատուցելու հետ կապված Պահառուի բոլոր ծախսերը, 	<ul style="list-style-type: none"> • compensate the Custodian for all expenses related to the provision of the custodian services at the actual price,

<ul style="list-style-type: none"> կատարել “Արժեթղթերի շուկայի մասին” ՀՀ օրենքով, Կանոններով և սույն պայմանագրով իր համար սահմանված այլ պարտականությունները: 	<ul style="list-style-type: none"> comply with other obligations defined by the Law of the Republic of Armenia "On Securities Market", the Rules and this agreement.
Հաճախորդն իրավունք ունի.	The Client may:
<ul style="list-style-type: none"> Պահառուից պահանջել և ստանալ իր դեպո հաշիվների վերաբերյալ ցանկացած տեղեկություն, ներառյալ փակված դեպո հաշիվների վերաբերյալ՝ փակման պահից երեք տարվա ընթացքում, Պահառուից պահանջել իր դեպո հաշվում Պահառուի մեղքով կատարված սխալ գրառումների անհատույց ուղղում, 	<ul style="list-style-type: none"> request and receive from the Custodian any information about their depo account, including information about any closed depo accounts, within three years after they have been closed, request correction of any wrong records made by the Custodian. If the error was the Custodian’s fault, the correction shall be made free of charge,
<ul style="list-style-type: none"> օգտվել “Արժեթղթերի շուկայի մասին” ՀՀ օրենքով, Կանոններով և սույն պայմանագրով իր համար սահմանված այլ իրավունքներից: 	<ul style="list-style-type: none"> exercise other rights stipulated by the Law of the Republic of Armenia "On Securities Market", the Rules, and this agreement.
ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ	CALCULATION AND PAYMENT OF FEES FOR CUSTODIAN SERVICES
<p>Հաճախորդին պահառության ծառայությունների մատուցման հետ կապված Պահառուի կատարած բոլոր ծախսերը փոխհատուցվում են Հաճախորդի կողմից՝ փաստացի արժեքով:</p>	<p>All the Custodian’s expenses related to the provision of custodian services to the Client shall be compensated by the Client at the actual value.</p>
<p>Պահառության ծառայությունների դիմաց վճարների չափը սահմանվում է Պահառուի սակագներով</p>	<p>The amount of fees for custodian services shall be defined by the tariff of the Custodian .</p>
<p>Պահառուն պարտավոր է Հաճախորդին ծանոթացնել գործող սակագներին, ինչպես նաև դրանց փոփոխման դեպքում Այդ մասին տեղեկացնել Հաճախորդին ոչ ուշ, քան նոր սակագներն ուժի մեջ մտնելու օրվանից 21 օրացուցային օր առաջ:</p>	<p>The Custodian is obliged to acquaint the Client with the current tariffs, and in case of their change, to inform the Client about it no later than 21 calendar days before the date of entry into force of the new tariffs.</p>
<p>Սույն պայմանագրի համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց Պահառուին վճարման ենթակա գումարը Սակագների կանոններով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում կարող է կիրառվել տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարած գումարի 0.1%-ի չափով, սակայն ոչ ավել քան այդ գումարի 10%-ը:</p>	<p>For failing to effect the payment for services provided under this Agreement within deadlines defined by the Custodian’s tariffs, penalties may be applied at the rate of 0.1% of the amount outstanding for each day of delay, not to exceed 10% of the said amount.</p>
ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ	CONDITIONS AND PROCEDURE FOR THE RETURN OF SECURITIES TO THE CLIENT
<p>Հաճախորդի դեպո հաշվի վրա հաշվառվող արժեթղթերը վերադարձվում են Հաճախորդին նրա դեպո հաշիվը փակելիս և/կամ Հաճախորդից համապատասխան հանձնարարական ստանալու դեպքում:</p>	<p>Securities registered on the Client’s depo account shall be returned to the Client if their account is to be closed or if an order to that effect has been received from the Client.</p>
<p>Եթե արժեթղթերը Հաճախորդին են վերադարձվում նրա հանձնարարականի հիման վրա, ապա այդ գործողությունը կատարվում է հանձնարարականը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p>If the securities are returned to a Client based on his/her order, that transaction shall be executed in three business days.</p>
<p>Եթե Հաճախորդի դեպո հաշիվը ենթակա է փակման ոչ Հաճախորդի նախաձեռնությամբ, ապա դեպո հաշվի վրա հաշվառվող արժեթղթերը Հաճախորդին են վերադարձվում հաշվի փակման օրը, նախքան հաշվի փակումը:</p>	<p>If the Client’s depo account is to be closed without the Client’s request, the securities registered on the depo account shall be returned to the Client on the day the account is closed, before it is closed.</p>
<p>Արժեթղթերը Հաճախորդին են վերադարձվում դրանք ռեեստրավարի կամ այլ պահառուի մոտ Հաճախորդի համար բացված հաշվին փոխանցելու եղանակով:</p>	<p>The securities shall be returned to the Client by transferring them to the account opened for the Client with a registry keeper or another custodian.</p>
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ	RESPONSIBILITY
<p>Ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը</p>	<p>В случае неисполнения или ненадлежащего исполнения принятых обязательств стороны несут ответственность в соответствии с действующим законодательством Республики Армения:</p>

պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:	
Պահառուն պատասխանատվություն է կրում պահառության հանձնված արժեթղթերի նկատմամբ իրավունքը հավաստող գրառումները պահպանելու, դրանց գաղտնիությունը ապահովելու, արժանահավատության, այդ գրառումների մասին ճշգրիտ տվյալներ ներկայացնելու և դրանք ժամանակին իրականացնելու, համար:	The Custodian is responsible for keeping records of rights on securities held in custody, for confidentiality and accuracy thereof, as well as provision, and timely provision, of reliable information on the said records.
Պահառուն պատասխանատվություն չի կրում օրենքով սահմանված կարգով իրենից տեղեկություններ ստացած անձանց կողմից երրորդ անձանց շրջանակում Պահառուի կողմից նրանց տրամադրած ծառայողական տեղեկատվության բացահայտման համար:	The Custodian shall not be held liable for any disclosure of insider information to third parties by persons that received such information from the Custodian under the provisions of the legislation.
Պահառուն փոխհատուցում է պահառության իրականացման ժամանակ իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու արդյունքում Հաճախորդին պատճառված վնասը, եթե չապացուցվի, որ վնասներն առաջացել են անհաղթահարելի ուժի պատճառով կամ Հաճախորդի մեղքով:	The Custodian shall compensate the Client for any losses that occurred as a result of its failure to fulfill or duly fulfill its obligations during the provision of custody services unless it has been proven that the losses occurred as a result of a force majeure or by the Client's fault.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ	VALIDITY AND TERMINATION OF THE AGREEMENT
Պահառուն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխություններ և լրացումներ կատարել Պայմանագրում, ինչպես նաև գործողության մեջ դնել պահառության պայմանագրի նոր խմբագրությունը այդ մասին 21 օրացուցային օր առաջ ծանուցելով Հաճախորդին:	The Custodian has the right to unilaterally amend and supplement the Agreement, as well as to put into effect a new version of the custodian agreement, notifying the client 21 calendar days in advance.
Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխությունների եւ լրացումների կամ պահառուի պայմանագրի) նոր խմբագրության գործողության մեջ դնելու մասին Հաճախորդին ծանուցումն իրականացվում է պարտադիր հրապարակման միջոցով. ա) փոփոխությունների եւ լրացումների ամբողջական տեքստով կամ պահառուի պայմանագրի նոր խմբագրության հրապարակման միջոցով պահառուի պաշտոնական կայքում հետևյալ հասցեով. http://www.inviabroker.am կամ բ) փոփոխությունների և լրացումների ամբողջական տեքստով հաղորդագրության ուղարկում Հաճախորդի իրավասու էլեկտրոնային հասցեին	Notification of the client of any changes and additions to this agreement or the entry into force of a new version of the custodian agreement is carried out by mandatory publication; a) by publishing changes and additions in the full text or a new version of the depository agreement on the official website of the Custodian at the following address: http://www.inviabroker.am or b) sending a full-text message about changes and additions to the corresponding email address of the Client.
Պայմանագրում փոփոխությունների կամ նոր խմբագրության դեպքում Պահառուն կիրառակի նորացված Պայմանագիրը իր ինտերնետային Կայքում նշելով վերջին փոփոխության ամսաթիվը: Սույնով Հաճախորդը պարտավոր է նվազագույնը յոթ օրացուցային օրը մեկ անգամ այցելել Ընկերության Կայք և ստուգել Պայմանագրի փոփոխությունները: Պայմանագրի փոփոխությունները կամ նոր խմբագրությունը իրավական ուժ կունենան և կտարածվեն, դրանք Կայքում տեղադրելուց հետո ծագած պարտավորությունների վրա:	In case of changes or a new version of the agreement, the Custodian will publish the updated agreement on its website indicating the date of the last change. Hereby, the client is obliged to visit the Custodian's website at least once every seven calendar days and check the changes in the agreement. Changes to the agreement or a new version will be legally binding and apply to obligations arising after their posting on the website.
Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում միանալու-հայտ պայմանագրի հաստատման պահից և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի լուծվել կողմերից մեկի նախաձեռնությամբ կամ կողմերի համաձայնությամբ եթե Կանոններով այլ կարգ սահմանված չէ.	This Agreement shall be effective once signed and shall remain in full force until terminated by one of the parties or the both parties unless the Rules specify a different procedure unless the Rules specify a different procedure.
Պահառուն իրավունք ունի միակողմանիորեն առանց ծանուցման հրաժարվել սույն Պայմանագրից եթե Հաճախորդի դեպո հաշվի մնացորդը զրո է և մեկ տարվա ընթացքում Հաճախորդը այդ հաշվով որևէ գործառնություն չի իրականացրել, ապա Հաճախորդի դեպո հաշվը փակվում է և սույն պայմանագրի գործողությունը դադարում:	The Custodian has the right to unilaterally withdraw from this Agreement without prior notice If the Client's depo account has zero balance, and there were no transactions on the account for one year, the account shall be closed, and this agreement shall be terminated.

ՖՈՐՍ-ՄԱՃՈՐ	FORCE-MAJEURE
<p>Կողմերը պատասխանատվություն չեն կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցությամբ, ներառյալ արտաքին սահմանափակումների, ազգայնացման, արժույթային, բանկային կամ արժեթղթերով գործառնությունների սահմանափակումների, պատերազմի, ահաբեկչության, հեղափոխության, քաղաքացիական անհանգստությունների, գործադուլների, ցանկացած պետական մարմնի գործողությունների (անկախ նրանից՝ տվյալ պետական մարմինը գործել է իր լիազորությունների շրջանակում, թե ոչ) ինչպես նաև բնական աղետների ազդեցությամբ:</p>	<p>The Parties shall not be held liable for failing to fulfill or duly fulfill their obligations if such failure was caused by forces beyond their control, including external restrictions; nationalization; currency, banking, and securities restrictions; wars; acts of terror; revolutions; civil unrest, strikes, actions of any state body (regardless of whether such state body acted within or outside its competence), as well as natural disasters.</p>
ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ	FINAL PROVISIONS
<p>Միանալու հայտի կնքմամբ Հաճախորդը հաստատում է, որ իրեն հնարավորություն է ընձեռվել ծանոթանալու ՀՀ-ում պահառության գործունեությունը կարգավորող իրավական ակտերին և Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից ընդունված կանոնակարգ 4-07-ով սահմանված բոլոր տեղեկությունները:</p>	<p>By signing the joining application, the Client confirms that he has been given the opportunity to familiarize himself with the legal acts regulating custody activities in Armenia and all the information defined by Regulation 4-07 adopted by the Central Bank of Armenia.</p>
<p>Սույն պայմանագրի առնչությամբ ծագած բոլոր տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով վեճի կարգավորման անհնարինության դեպքում, այն լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	<p>All discrepancies between the Parties arising out of or in connection with this agreement shall be resolved via negotiations. If it appears to be impossible to resolve the matter via negotiations, it shall be done as defined by the legislation of the Republic of Armenia.</p>